Ապրիլի 4-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

01/04/13թ. «Գանձասար-2»-«Փյունիկ-2» խաղին «Փյունիկ-2» թիմի ֆուտբոլիստ Ալբերտ Օհանյանի հեռացման, մրցակցին դարպասը գրավելու ակնհայտ հնարավորությունից զրկելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

31/03/13թ. «Հատիս-97-ֆզ»-«Ավան ԵԿՄ-97» խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու և խաղը ուշ սկսելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 20-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Աբովյանի մ/դաշտ» ՓԲԸ-ին տուգանել 5000 դրամ: